ԱՐՎԵՍՏ, ИСКУССТВО, ART

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ *

ՀՏԴ 747 *DOI: 10.52063/25792652-2023.1.16-119*

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի ասպիրանտ,
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս,
Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ruza_mik@yahoo.com
ORCID: 0000-0003-1185-8419

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի առաջին կինոթատրոնների ինտերիեր դիզայնը, դրանց պատմական զարգացման փուլերը, պարզաբանել առաջին կինոթատրոնների դերը և նշանակությունը հայաստանյան մշակույթում:

Աշխատանքի խնդիրն է վերլուծել և մանրամասնել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի 30-ական թվականների հայաստանյան խոշոր և համեմատաբար փոքր քաղաքների, ինչպիսիք էին Երևանը, Գյումրին, Վանաձորը, Դիլիջանը, կինոթատրոնների ինտերիեր դիզայնը, վեր հանել հետաքրքրական փաստեր՝ կապված դրանց ստեղծման, կայացման հետ, պարզաբանել ինտերիեր դիզայնի բաղադիչ տարրերի մանրամասները:

Հոդվածում կիրառված են նկարագրական և վերլուծական մեթոդները:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է ասել, որ հայկական կինոմշակույթի զարգացման կարևոր մաս են եղել կինոթատրոնները: Հայ հանդիսատեսի սերը դեպի կինոն ուղիղ ձևով կապված էր կինոթատրոնների ձևավորման հետ: Երևանի, Գյումրիի և այլ քաղաքների առաջին կինոթատրոնները քաղաքային կյանքի կարևոր բաղադիչներից էին: Փաստագրական նյութերի և արխիվների ուսումնասիրությունը թույլ տվեց պատկերացում կազմել առաջին կինոթատրոնների ինտերիեր դիզայնի, ինչպես նաև այլ ճարտարապետական և էսթետիկ մանրամասների մասին: Բացի դրանից ուսումնասիրության արդունքում ի հայտ եկան այնպիսի կինոթատրոններ, որոնք նախկինում հայտնի չէին և չեն ուսումնասիրվել:

Հիմնաբառեր՝ *կինոթատրոն, ինտերիեր դիզայն, ոճ, Երևան, կինոդահլիճ, ճարտարապետություն, հատակագիծ:*

Նախաբան

Կինոթատրոնային մշակույթը Հայաստան ներթափանցեց դեռևս 20-րդ դարի սկզբին: Այս շրջանում Հայաստանում թվագրվում էին մի շարք կինոթատրոններ.

* Հոդվածը ներկայացվել է 25.02.2023թ., գրախոսվել՝ 23.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

Երևանում՝ «Ապոլլո», «Իլյուզիոն», «Ավանեսովի և Խաչատուրովի» փայտաշեն ամառային կինոթատրոնները, Ալեքսանդրապոլում «Էրատո» կինոթատրոնը: Եվս երկու կինոթատրոն գործում էր Կարսում և Սարիղամիշում (հայերեն անվանումը՝ Եղեգնիկ, գտնվում է Կարսի մարզում) (Չախիրյան 56): 20-րդ դարի 10-ական թվականներին Երևանում կառուցվում են «Ապոլլո» և Ջանփոլադյան կինոթատրոնների հանդիսատեսային շենքերը: Վերջինս կառուցված էր քաղաքային ակումբի շենքի տեղում և ծառայում էր որպես թատրոնի և կինոյի շենք՝ անվանվելով «Իլյուզիոն» (ճարտարապետ՝ Ե. Բոգուշևիչ): «Իլյուզիոն» գործում էր 1909 թ.-ից, իսկ Ապոլլոն բացվեց 1910 թ. հոկտեմբերին: Երևանի երկու կինոթատրոններն էլ քաղաքի ժամանցի հիմնական կետերն էին, ըստ էության, բոլոր քաղաքացիները տարվա մեջ գոնե մեկ անգամ այցելում էին այս կինոթատրոնները, ինչը բացատրվում էր նախևառաջ կինոթատրոններում լավ ֆիլմային ծրագրի ներկայացմամբ: Երկու կինոթատրոնները ցուցադրում էին համաշխարհային կինոպրեմիերաները: Իլյուզիոնում դեռևս 1909 թ. ցուցադրվում էին «Автомобильные гонки», «Саломеа», «Арлезианка» ֆիմերը: Ապոլլոյում ցուցադրվել են «Похороны католикоса всех армян Матевоса второго», «1812 год», «Хохот Смерти», «Ревность и смерть», «Падения Трои» ֆիլմերը: Հետաքրքքական է, որ, օրինակ, «Во когтях позора» ֆիմը կինոթատրոնի սեփականատերը ձեռք էր բերել արտասահմանից, և ողջ Ցարական Ռուսաստանում ֆիմը միայն Երևանում է ցուցադրվել, իսկ «Ապոլլո» կինոթատրոնում ցուցադրվում էին նաև մանկական ֆիլմեր:

Առաջին կինոթատրոնների ձևավորումը եվ ինտերիեր դիզայնը

Երևանում առաջին կինոցուցադրումները տեղի են ունեցել 1899 թ. փոքրիկ փայտաշեն ամբարում, որը գտնվում էր քաղաքային ոստիկանության շենքի բակում: Պետք է նշել, որ այն տարիներին Երևանում դեռ երկաթուղի չկար, երկաթուղին անցկացվեց 1901 թ., իսկ կինոյի առաջին ցուցադրումը տեղի ունեցավ դրանից երկու տարի առաջ, և այս առումով հետաքրքրական են Համո Բեկնազարյանի հուշերը. «Ուսուցիչը ինձ դասից ազատեց, և ես վազեցի դեպի քաղաքի կենտրոնը, որտեղ գտվում էր ոստիկանական վարչությունը: Այնտեղ բակի փայտյա սարայում, Երևանում առաջին անգամ բացվել է «իլյուզիոն» և ինչպես ասում էին «կենդանի պատկերներ» էին ցուցադրում: Տոմսը արժեր 10 կոպեկ…» (Բեկնազարյան 27-28)

«Իլյուզիոն»-ը լեփ լեցուն էր: Հասարակ փայտյա նստարանների վրա խռնվել էին երեխաներ ու մեծահասակներ…

Կարելի է ասել, որ հենց այս ամբարը դարձավ Երևանի առաջին «կինոթատրոնը»:

«Ապոլլոն» և «Գրանդ Իլյուզիոնը» գտնվում էին գրեթե դեմ դիմաց՝ այժմյան Հանրապետության Հրապարակի հարավային հատվածում: Ֆինանսական դժվարությունների պատճառով կինոթատրոնների առաջին տերերը վաճառում են կինոթատրոնները: Նոր կապալառուները թարմացնում են դահլիճի ինտերիերը, կատարում են էրգոնոմիկ փոփոխություններ՝ դրա հետ մեկտեղ փոխելով նվագախմբի կազմը և գնային քաղաքականությունը (Հակոբյան 475-476): Իլյուզիոնի հրդեհից հետո՝ 1910 թ. փետրվարին, Էրիվանի նահանգի ղեկավարությունը հաստատում է կինոթատրոնի վերահատակագծված նախագիծը: Ըստ նոր հատակագծի՝ կինոթատրոնի բոլոր սենյակները ընդլայնվում են, ինտերիերը ստանում է շքեղ ձևավորում, ամենայն մանրամասնությամբ մշակվում են հակահրդեհային և տարհանման սխեմաները, ինչպես նաև տեղադրվում է նորագույն տեխնիկա: Այս վերականգնման աշխատանքերը կատարվում են «Իլյուզիոն»-ի սեփականատեր Վ. Գագուայի միջոցներով (Вниманію почтеннѢйшей Эриванской публики отъ дирекціи старого театра “Иллюзіонъ”, ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ 1): Այս երկու

կինոթատրոնների վերաբերյալ վկայություններ են պահպանվել նաև գեղարվեստական գրականության մեջ, մասնավորապես՝ Գուրգեն Մահարու «Երիտասարդություն» անավարտ վեպում և Ռաֆայել Աթայանի «Զարթոնք» պատմավեպում (Աթայան 50): Հատկապես հետաքրքրական է Մահարու հիշատակումը՝ կապված կինոթատրոնի տեղերի քանակի (121) և որոշ հատկանշական բնորոշումների հետ (Մահարի 403): Աղբյուրների վկայությամբ՝ «Ապոլլո» կինոթատրոնը ավելի շքեղ հարդարում ուներ, քան «Իլյուզիոնը», բացի դրանից «Ապոլլո կինոթատրոնի տոմսերը ավելի թանկ էին, իսկ կինոթատրոններում թանկարժեք ֆիլմերի ցուցադրման ժամանակ արգելվում էր ուշանալը: Այս երկու կինոթատրոնները գտնվում էին պարբերական մրցակցության մեջ: Գրական աղբյուրներից մեկում պահպանվել է հայտարարություն «Ապոլլո» կինոթատրոնում կազմակերպվող՝ Նոր տարվա մանկական հանդեսի մասին՝ եղևնու և պարերի տոնակատարության մանրամասներով, որտեղ նշվում է տոնածառի համար թանկարժեք խաղալիքների և ձևավորումների, բազմագույն էլեկտրական լուսավորվող գիրլանդների ձեռքբերման, ինչպես նաև կինոթատրոնի ճեմասրահում կազմակերպվող շահումային խաղերի մասին (Елка и танцы, ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ 1): 1912 թ. «Ապոլլո» կինոթատրոնի կողքին բացվում է «Աննոնա» շքեղ ճաշարանը, որը հավանաբար սպասարկում էր հանդիսատեսներին (“Аннона”, ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ 2): «Ապոլլո» կինոթատրոնի շենքի ճակատին էր գտնվում Երևանի քաղաքային ժամացույցը (այժմ գտնվում է Երևանի պատմության թանգարանում), որը ձեռք էր բերվել 1891 թ. քաղաքային հանգանակության միջոցներով: Ինչ վերաբերում է Ջանփոլադյանի շենքին, ապա վերջինիս ճեմասրահից պահպանվել են լուսանկարներ: Դասական ոճով իրականացված ճեմասրահը վերանորոգվել է խորհրդային տարիներին: Կինոթատրոնների կառուցումը զանգվածային բնույթ ստացավ Հայաստանի խորհրդայնացումից հետո: 1922 թ. մայիսին ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշմամբ պետականացվում են «Ապոլլո» և Ալեքսանդրապոլի «Էրատո» կինոթատրոնները, վերանվանվում են՝ ստանալով «Պրոլետար» և «Շիրակ» անվանումները (Մադոյան 50): «Պրոլետար» կինոթատրոնը ուներ նաև ամառային կինոդահլիճ, ևս մեկ կինոթատրոն գործում էր բանվորական ակումբում: Երևանում գործում էր նաև «Աշխատանք» կոչվող ամառային և ձմեռային դահլիճներ ունեցող կինոթատրոնը: Եվս մեկը գործում էր այսօրվա կենտրոնական բանկի տեղում՝ «Խորածառի» կամ խորհրդային ծառայողի ակումբում (Խեչումյան 73): Բացի դրանից, ֆիլմերի ցուցադրում են իրականացվում Նոր Բայազետում, Ղարաքիլիսայում, Ստեփանավանում: Հետաքրքրական է, որ հայ անվանի ճարտարապետ Ա. Թամանյանը Երևանի պետական թատրոնի շենքը նախագծելիս նախատեսել էր նաև կինոսեանսների համար նախատեսված էկրան, կինոխցիկներ: «Պրոլետար» կինոթատրոնի շենքը ապամոնտաժվեց 30-ականներին: Ինչ վերաբերվում է «Իլյուզոն» կինոթատրոնին, ապա այն նույնպես պետականացվեց՝ վերածվելով կարմիր բանակի ակումբի, իսկ հետագայում՝ ՀՀ-ի անկախության ժամանակ, դարձավ ՀՀ ՊՆ սպայի տուն: 2005 թ. շենքը ապամոնտաժվեց, որի տեղում կառուցվեց «Պիացա Գրանդե» բիզնես կենտրոնը: 1923 թ. Երևանի կարմիր բանակի տուն կոչվող շենքում (այժմ՝ Խ. Աբովյանի անվան №2 դպրոցի շենք) բացվում է հայկական դիվիզիային պատկանող «Աստղ» կինոթատրոնը, որտեղ ցուցադրվում էին ֆիլմեր նաև հասարակության համար (Դզնունի 12): Նույն ժամանակ Աբովյան փողոցի պուրակներից մեկում (հետագայում նույն տեղում կառուցվում է «Կովկաս» սրճարանը)՝ Երքաղսովետի տրամադրած, կառուցվեց Պետկինոյի ամառային կինոթատրոնը: Պետկինոյի ամառային կինոթատրոնը իրենից ներկայացնում էր երկար նստարաններից, օթյակներից, կինոխցիկի սենյակից և դրամարկղից բաղկացած մի կառույց, իսկ դիմացի շենքի սպիտակ ներկած հատվածը ծառայում էր որպես էկրան: Ինչպես ընդունված էր այդ ժամանակաշրջանի կինոթատրոններում, Պետկինոն նույնպես ուներ փողային

նվագախումբ: Շենքի պատշգամբի տակ կար հատուկ լուսավորություն, որը նախատեսված էր կինոթատրոնի ցուցանակի համար: Ուշագրավ է, որ օթյակներից մեկի միջով մի ծառ էր անցնում: Կինոգործիչների առաջին միավորումը՝ Պետլուսկինոն, ցանկանալով բացի ամառային կինոթատրոնից ունենալ նաև ձմեռային կինոթատրոն, Ամիրյան փողոցի վրա գտնվող Հայ ավետարանականների աղոթարանի շենքը բռնագրավելով, 1924 թ. կառուցում է, «Նաիրի» կինոթատրոնը: Հետագայում Նաիրի կինոթատրոնը տեղափոխվեց այն ժամանակ Ստալինի, այսօր Մեսրոպ Մաշտոցի անունը կրող փողոց: Ճարտարապետ Գևորգ Թամանյանի նախագծած շենքը դարձավ առաջին ներկառուցված կինոթատրոններից մեկը Հայաստանում: Աթեիստական շարժման ժամանակաշրջանում կրոնական բազմաթիվ կառույցներ քանդվեցին՝ դրանց տեղում կանգնեցնելով թատրոններ, կինոթատրոններ: Այդպիսի կինոթատրոն կառուցվեց Աբովյան փողոցի վրա գտնվող Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու (Հարությունյան 376) տեղում՝ անվանվելով «Մոսկվա» կինոթատրոն: 1938 թ. ճարատարպետներ Գ. Քոչարի և Տ. Երկանյանի նախագծով կառուցված Հայաստանի պատմության առաջին բազմադահլիճ կինոթատրոնը երկհարկանի կառույց էր՝ բաղկացած 700 տեղանոց երկու կինոդահլիճից: 1935-1936 թթ. Դիլիջանի Ս. Աստվածածին եկեղեցու տեղում կառուցվեց Շիրվանզադեի անվան ակումբային շենքը, որտեղ գործում էր նաև կինոթատրոն: Նույն ժամանակաշրջանում կառուցվում են Վանաձորի՝ Գևորգ Քոչարի հեղինակած կինոթատրոնը, Ալավերդիի՝ Տիրան Մարությանի հեղինակած կինոթատրոնը:

Եզրակացություն

Ամփոփելով կարելի է ասել, որ հայաստանյան առաջին կինոթատրոնները իրենց նշանակությամբ, դիզայնով և պատմությամբ անգնահատելի արժեք են ներկայացնում Երևանի, Գյումրիի և այլ քաղաքների կոլորիտի համար: Ուսումնասիրման արդյունքում ի հայտ եկան այնպիսի հետքրքրական փաստեր, ինչպիսիք են առաջին նորահայտ կինոթատրոնի բացահայտումը, ինչպես նաև արդեն հայտնի կինոթատրոնների ինտերիերի մանրամասները, պատմական մանրամասները և այլն: Ուսումնասիրությունը ի հայտ բերեց նախկինում չներկայացված փաստերի մի աբողջություն, ինչը հնարավորություն տվեց նոր տեսանկյունից և նոր հայացքով մոտենալ հայկական դիզայնի և ճարտարապետության զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթայան Ռաֆայել, *Ձարթոնք*, «Հայպետհրատ», Երևան, 1958, 493 էջ:
2. Բեկնազարյան Համո, *Հուշեր դերասանի և կինոռեժիսորի*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1968, 269 էջ:
3. Դզնունի Դանիել, *Ուրվագիծ հայկական կինեմատոգրաֆիայի պատմության*, ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության, Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, 1961, 269 էջ:
4. Խեչումյան Վիգեն, *«Մի շատ հին կինոկադր»*, Էկրան №5, Երևան, Հայկինոպրոկատ, 1973, էջ 10-11:
5. Հակոբյան Թադևոս, *Երևանի պատմությունը (1879-1917 թթ.)*, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1963, 671 էջ:
6. Հարությունյան Վարազդատ, *Հայկական ճարտարապետության պատմություն*, ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1958: «Լույս» պետական հրատարակչություն, Երևան, 1992, 632 էջ:
7. Մադոյան Ռազմիկ, *Ժամանակը ժապավենի վրա*, Արևիկ հրատ., Երևան, 1990, 264 էջ:

8. Մահարի Գուրգեն, *«Երիտասարդություն» անավարտ վեպ, Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, «Անտարես» հրատարակչություն, 463 էջ:

9. Չախիրյան Գրիգոր., *Կինոն նախահեղափոխական Հայաստանում, Հայկական կինոարվեստը հոդվածների ժողովածու*: Երևան, 1958:

10.*«Аннона»*, ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ, № 10, 1912, суббота 28 января, с. 2, общ. 2 стр.

11.Вниманію почтеннѣйшей Эриванской публики отъ дирекціи старого театра “Иллюзіонъ”, ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ, № 13, 1910г., суббота 13, февраля, стр.1, общ. 2 стр.

12.*Елка и танцы*, ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ, № 96, 1910г., вторникъ 21 декабря, стр.1, общ. 2 стр.

WORKS CITED

1. *“Annona”*, ERIVANSKÍYA OB"YAVLENÍYA, № 10, 1912, subbota 28 yanvarya, s. 2 [*“Annona”*, ERIVAN ANNOUNCEMENTS, No. 10, 1912, Saturday January 28, p. 2, total 2 p] (in Russian)

2. At’ayan Rafayel, *Zart’vonk’*, "Haypethrat", Yerevan [Atayan Rafayel, Zartonk, "Haypethrat", Yerevan, 493 pages] 1958. (in Armenian)

3. Beknazaryan Hamo, *Husher derasani yev kinorrezhisori*, «Hayastan» hratarakch’ut’yun,Yerevan, 269 ej [Bek-Nazaryan Hamo., *Notes of an Actor and Film Director*, ed. «Hayastan», pub. Yerevan, 269 pages] 1968. (in Armenian)

4. Ch’akhiryan Grigor, *Kinon nakharrevoluts’ion Hayastanum, Haykakan kinoarvesty hodvatsneri zhoghovatsu*, Hayakakan SSRR GA Hratarakch’ut’yun, Yerevan, [Chakhiryan Grigor., *Cinema in Pre-Revolutionary Armenia, Armenian Film Art, a Collection of Articles*, Armenian SSR GA Publishing House, Yerevan] 1958. (in Armenian)

5. Dznuni Daniel, *Urvagits haykakan kinematografiayi patmut’yan*, HSSRR kulturayi ministrut’yan hratarakch’ut’yunneri yev poligraf ardyunaberut’yan glkhavor varch’ut’yan, Poligrafkombinat, Yerevan, [Dznuni Daniel, *Outline of the History of Armenian Cinematography*, Publishing House of the Ministry of Culture of the USSR and the Main Department of Polygraph Industry, Polygraph Combine, Yerevan] 1961. (in Armenian)

6. Hakobyan Tadevos., *Yerevani patmut’yuny (1879-1917)t’t’*., Yerevani hamalsarani hratarakch’ut’yun, Yerevan, [Hakobyan Tadevos, *History of Yerevan (1879-1917)*, Yerevan University Publishing House, Yerevan, 671 pages] 1963. (in Armenian)

7. Harut’yunyan Varazdat, *Haykakan chartarapetut’yan patmut’yun*, "Luys" petakan hratarakch’ut’yun, Yerevan, [Harutyunyan Varazdat, *History of Armenian Architecture*, "Luys" State Publishing House, Yerevan, 632 pages] 1992. (in Armenian)

8. Khech’umyan Vigen, *"Mi shat hin kinokadr"*, Ekran №5, Yerevan, Haykinoprokat, Ej 10-11. [Khechumyan Vigen., *"A very Old Film Frame"*, Screen No. 5, Yerevan, Haykinoprokat, Page 10-11] 1973. (in Armenian)

9. Madoyan Razmik., "*Zhamanaky zhapaveni vra*", Arevik hrat., Yerevan, 264 ej [Madoyan Razmik, *"Time on Tape"*, Arevik publishing house, Yerevan, 264 pages] 1990. (in Armenian)

10. Mahari Gurgen., "*Yeritasardut’yun*" *anavart vep, Yerkeri liakatar zhoghovatsu*, h. 4, , «Antares» hratarakch’ut’yun.[Mahari Gurgen, "*Youth*" unfinished novel, Complete collection of Works, vol. 4, "Antares" publishing house, 463 pages] (in Armenian)

11. Vnimaníyu pochtennЪyshey Erivanskoy publiki ot" direktsíi starogo tetra “Illyuzíon"”, ERIVANSKÍYA OB"YAVLENÍYA, № 13, 1910g., subbota 13, fevralya [To the Attention of the Most Respected Erivan Public from the Management of the Old Theater “Illusion”, ERIVAN ANNOUNCEMENTS, No. 13, 1910, Saturday, February 13, p. 1, general. 2 page] (in Russian)

12. *Yelka i tantsy*, ERIVANSKÍYA OB"YAVLENÍYA, № 96, 1910g., vtornik" 21 dekabrya, str.1, obshch. 2 str.[Christmas tree and Dances, ERIVAN ANNOUNCEMENTS, No. 96, 1910, Tuesday, December 21, p. 1, general. 2 page] (in Russian)

THE INTERIOR DESIGN OF THE FIRST ARMENIAN CINEMA THEATERS

RUZANNA MIKAYELYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Arts, Ph.D. Student;
State Academy of Arts of Armenia,
National Polytechnic University of Armenia, Lecturer
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to present the interior design of the first cinemas in Armenia, the stages of their historical development, to clarify the role and significance of the first cinemas in Armenian culture.

The task of the work is to analyze and detail the interior design of cinemas in the late 19th century and the 30s of the 20th century in large and relatively small Armenian cities such as Yerevan, Gyumri, Vanadzor, Dilijan, to highlight interesting facts related to their creation, to clarify details of interior design components.

Descriptive and analytical methods are used in the article.

As a result of the study, it can be said that cinemas were an important part of the development of Armenian film culture. The Armenian audience's love for cinema was directly related to the design of cinemas. The first cinemas in Yerevan, Gyumri and other cities were one of the important components of urban life. The study of documentary materials and archives allowed an insight into the interior design of the first cinemas, as well as other architectural and aesthetic details. In addition, as a result of this study, cinemas that were previously unknown and unstudied appeared.

Keywords: *Cinema, interior design, style, Yerevan, cinema hall, architecture, floor plan.*

ДИЗАЙН ИНТЕРЬЕРА ПЕРВЫХ АРМЯНСКИХ КИНОТЕАТРОВ

РУЗАННА МИКАЕЛЯН
аспирантка Института искусств
Национальной академии наук Республики Армения,
преподаватель Государственной академии художеств Армении и
Национального политехнического университета Армении,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – представить интерьер первых кинотеатров в Армении, этапы их развития, прояснить роль и значение первых кинотеатров в армянской культуре.

Задача работы – проанализировать и детализировать интерьер кинотеатров конца 19 века и 30-х годов 20 века в крупных и относительно небольших городах Армении, таких как Ереван, Гюмри, Ванадзор, Дилижан, выделить интересные факты, связанные с их созданием, уточнить детали элементов дизайна интерьера.

В статье используются описательный и аналитический методы.

В результате исследования можно отметить, что кинотеатры были важной частью развития армянской кинокультуры. Любовь армянского зрителя к кинематографу была напрямую связана с развитием кинотеатров. Первые кинотеатры в Ереване, Гюмри и других городах были одной из важных составляющих городской жизни. Изучение документальных материалов и архивов позволило получить представление о внутреннем убранстве первых кинотеатров, а также о других архитектурных и эстетических деталях. Кроме того, в результате данного исследования появились сведения о ранее неизвестных и неизученных кинотеатрах.

Ключевые слова: *кинотеатр, дизайн интерьера, стиль, Ереван, кинозал, архитектура, план этажа.*